

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2018թ.

(Արձանագրություն թիվ 6)

Գիտական խորհրդը լսելով և քննարկելով ռեկտորի հրամանով ստեղծված հանձնախմբի ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքները «Համալսարանի ամբիոնները գիտամանկավարժական երիտասարդ կադրերով համալրման և նրանց հետ աշխատանքի կազմակերպման խնդիրները» հիմնախնդիրների վերաբերյալ (զեկուցող Ռ. Մխիթարյան) արձանագրում է, որ հանձնախումբը 2017թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպել է ուսումնասիրություններ ՀԱԱՀ-ի բոլոր ամբիոններում:

Ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել են ամբիոնների վարիչների և հանձնախմբի միացյալ նիստում: Հանձնախմբի կողմից ուսումնասիրվել են բոլոր ֆակուլտետներում և նրանցում ընդգրկված ամբիոններում գիտամանկավարժական երիտասարդ կադրերով համալրման և նրանց հետ աշխատանքի կազմակերպման խնդիրների իրականացմանը վերաբերող բազմաբնույթ հարցեր:

Հանձնախումբը նշում է, որ համալսարանի շատ ամբիոններում գիտամանկավարժական երիտասարդ մասնագետների պատրաստման և այդ ամբիոնների գիտաուսումնական գործընթացներում նրանց ընդգրկման աշխատանքների դրվածքը հիմնականում կատարվում է բավարար մակարդակով, հետևապես այդ ամբիոններում կատարվում են բնականոն սերնդափոխությանը միտված զգալի աշխատանքներ:

Հանձնախումբն արձանագրում է նաև, որ համալսարանի շատ ամբիոններ օժանդակում և անգամ խրախուսում են ուսումնաօժանդակ անձնակազմի որոշ անդամների ձգտումները գիտաուսումնական գործընթացներում նրանց ընդգրկվելու համար: Այդ ամբիոնները մշտապես ողջունել և այժմ էլ ողջունում են երիտասարդ կադրերի ցանկությունը գիտաուսումնական աշխատանքներում նրանց ընդգրկվելու տեսակետից:

Որոշ ամբիոններում երիտասարդ կադրերի աշխատանքի կազմակերպման ոչ մի խանգարող գործոն չկա, այլ, ընդհակառակը, նրանց համար ստեղծված են բոլոր նպաստավոր պայմանները: Երիտասարդ գիտաշխատողները մասնակցում են մեթոդական ցուցումների կազմմանը, միջազգային և տեղական ամսագրերում հրատարակում են գիտական հոդվածներ, մասնակցում գիտաժողովներին, վերապատրաստվում ինչպես հանրապետության տարբեր բուհերում, այնպես էլ արտասահմանում:

Չնայած երիտասարդ կադրերի պատրաստման և ամբիոնների գիտաուսումնական աշխատանքներում նրանց ինտեգրմանը որոշ ամբիոններում առկա հաջողություններին, հանձնախումբը միաժամանակ նշում է, որ գիտամանկավարժական երիտասարդ կադրերով համալրման և նրանց հետ աշխատանքի կազմակերպման խնդիրները համալսարանի որոշ ամբիոններում դեռևս նկատվում է լուծումներ պահանջող որոշ խնդիրներ:

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Համալսարանի ամբիոնները գիտամանկավարժական երիտասարդ կադրերով համալրման և նրանց հետ աշխատանքի կազմակերպման խնդիրները հարցի վերաբերյալ